Տ. ԹՈՐԳՈՄ ԱԲԵՂԱ ՏՈՆԻԿՅԱՆ

(ավազանի անունը՝ Ադամ)

Ծնվել է 1974 թ. դեկտեմբերի 21-ին, Էջմիածին քաղաքում:

1991 թ. ավարտել է Էջմիածնի Անդրանիկ Օզանյանի անվան միջնակարգ դպրոցը:

1991-96 թթ. ուսանել և ավարտել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցը:

1996-97 թթ. ավարտել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի Ձ լսարանը:

1996 թ. մայիսի 16-ին, Համբարձման տոնին, ձեռամբ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ: Գրել է ավարտաճառ՝ «Գևորգ Ձ Կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը» թեմայով:

1997 թ. ծառայության է անցել Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանում որպես գործավար-քարտուղար:

1998 թ. մայիսից նշանակվել է Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի օգնական՝ եկեղեցական-կրոնական հարցերով:

1998 թ. օգոստոսի 30-ին Մայր Տաճարում, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Տ. ՄԿՐՏԻՉ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

(ավազանի անունը՝ Հարություն)

Ծնվել է 1974 թ. հուլիսի 11-ին, Երևան քաղաքում:

1991 թ. ավարտել է Արմավիրի մարզի Աղավնատուն գյուղի Հովհաննես Թումանյանի անվան միջնակարգ դպրոցը:

1991-96 թթ. ուսանել և ավարտել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցը:

1996-97 թթ. ավարտել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի Ձ լսարանը:

1996 թ. մայիսի 16-ին, Համբարձման տոնին, ձեռամբ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ: Գրել է ավարտաճառ՝ «Արշակ Տեր-Միքելյանի աստվածաբանական հայացքները նրա «Աստվածաբանական գիտությունները» գրքի մեջ և ընդհանրապես» թեմայով:

1997 թ. ծառայության է անցել Ք.Դ.Ք.Կ.-ում իբրև Մայր Աթոռ Ս. Էջմիածնին կից կիրակնօրյա վարժարանների վարիչ:

1998 թ. ծառայության է անցել Արարատյան Հայրապետական թեմի Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնում:

1998 թ. օգոստոսի 30-ին Մայր Տաճարում, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա: